

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мелкъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ուրբաթից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւրը պէտք է գործէ. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Perpetuum Mobile. Մատենա-
գրութիւն. Նամակ Դարաստեղծարից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր բարեխղճու-
թիւնը:

ԻՒՐԱՔԱՆՉԻՐԸ ՊԵՏԻ Ե ԴՈՐՈՒՄԻ

Չանազան տեղերի ներկայացուցիչներ,
որոնք ժողովել էին Մասիսում քննելու,
թէ ինչ միջոցներով կարելի է օգնել վե-
ղական ազգաբնակչութեանը, բարեբաղ-
նաւոր անտեսութիւնը և արդիւնաբերու-
թիւնը, յայտնեցին մի շարք բարի ցան-
կութիւններ և ցրվեցին:

Դպրոցներ, փորձական աղբարկներ,
չընկն մասնագէտներ, ցուցահանդէսներ և
այլ այդ տեսակ ձեռնարկութիւններ, որոնց
անհրաժեշտութեան մասին ամէն ժամա-
նակ ասվել-խօսվել է զանազան դիտարկում
ընկերութիւնների, ժողովների և հրատա-
րակութիւնների մէջ, այս անգամ էլ հան-
դէս եղան անշնան փոփոխութիւններով:

Միջոցները յայտնի են, բայց նրանք
չեն իրագործվում կեանքի մէջ: Չեն իրա-
գործվում, որովհետեւ ամէն մարդ սպա-
սում է, որ մի ուրիշը ներդրութիւն քաշէ ի-
րագործութեան ծանր բեռը իր վրա վերց-
նելու, իսկ ինքը բաւականանում է բարի
ցանկութիւնները յայտնելով: Մէկը միւսին
սպասելով այսպիսով զբոսնում է փաղ-
վան և այդպիսով իրաւագործութիւնը բոլոր-
ովն խափանվում և կորչում է:

Մեր մէջ, կոմկասում, շատ անգամ մենք
լսում ենք մեր զիւղատեսներին բողոք
այն բանի դէմ, որ կոմկասեան Գիւղատըն-
տեսական ընկերութիւնը քիչ է գործում,
որ նա պէտք է իրագործէր այս կամ այն
անհրաժեշտ գործը, որ նա պէտք է ամէն
կերպ աջակից լինէր զիւղատեսներին բար-

ւոքելու իր տնտեսութիւնը: Մենք ընդու-
նում ենք բողոքի առիթը ամէն հաճու-
թեամբ: Բայց համաձայն չենք նրա ձեա-
կերպութեան հետ: Ի՞նչ բան է Գիւղա-
տեսական ընկերութիւնը: Դա տեղական
զիւղատեսներից կազմված մի համա-
խմբում է: Ո՞ւրիշ մենք կարող ենք պա-
հանջներ անել, եթէ ոչ մենք ինքներս
մեզանից: Եթէ ընկերութիւնը չէ գոր-
ծում՝ դա նշանակում է, մեզինից շատերը,
որոնք անդամներ են այդ ընկերութեան,
չեն գործում:

Եթէ հարկւոր է առաջ դնալ, պէտք
է բոլոր ջանք դնենք և ճիշդ թափեր
այդ գործին նպաստելու: Եւ այն ժամա-
նակ, երբ մեզինից իւրաքանչիւրը կը գործէ
իր ոյժերի և ընդունակութեան չափով, կա-
րելի կը լինի յոստայ, որ հիմնարկութիւնը
կը կատարէ իրան վերապահված գերք:
Միշտ սպասելով, որ ուրիշը գործէ և
աշխատէ, մենք առաջ չենք դնալ և կը
մնանք նոյն կէտի վրա, որտեղ կանգնած
էինք մենք երէկվայ օրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

PERPETUUM MOBILE

(Նամակ Ալեքսանդր Գրիգորի)

Ոչ մի ժամանակ քանանայական հարցը այս-
պէս սուր կերպարանք չէր ընդունել մեզա-
նում, ինչպէս այժմ: Տարօրինակն այն է, որ
այս անգամ հարցը ծագել է քանանների կող-
մից, որոնք ակներեւ ցոյց են տալիս, որ եթէ
հարկաւորութիւն լինի պաշտպանելու իրանց
չափը, ընդունակ են դիմելու ամէն տեսակ
միջոցների և ոչ մի ոյժ—ոչ բարոյական, ոչ
օրինական—չէ կարող նրանց կատարելութիւնը
մեղադրել և ևս զսպել նրանց ստոր ձգտումնե-
րը: Գաղափար համարեալ ամբողջ հոգեւորական
կաստան (17 հոգի 26-ից) համախմբվել է պա-
րագլուխների—հոգեւոր կառավարութեան և
առաջ քանաններին—չորսել, խօսքները մէկ
են արել և վերջնականապէս վճռել են կամ
կարգադրել ինչ, կամ իրանց ասածն առաջ

տանել, հակառակ վեհափառ Կաթողիկոսի կար-
գադրութեան:

Բայց ինչ է նրանց կատարելութիւնը զար-
թեցրել միթէ վեհափառի այդ կարգադրու-
թիւնը բացասական կերպով է լուծել զրանց
«ինչն չը լինելու» հարցը: Ոչ, այդ բողոքը,
ինչպէս առաւելան առաւել ասում է՝ «ВЫС-
ШЕДШЕГО ЯЩА НЕ СТОИТЬ» (մի հաւկիթի արժե-
ղութիւն էլ չունի): Անբաղդութիւնը նրանումն
է, որ Ալեքսանդր Գրիգորը մեր կրօնասէր պա-
պերը չինել են երեք եկեղեցի ճիշդ երեք հա-
րեւան թաղերում (մօտ 150 սառնէն հեռաւո-
րութեամբ մէկը միւսին): Ժողովուրդը զանա-
զան պատճառներով յաճախում է ս. Աստուա-
ծածնի եկեղեցին, ս. Փրկիչը որքան և էլ ինչ
ժողովուրդ գնում է, իսկ երրորդ եկեղեցին, ս.
Նշանը, գուրդ է թէ ճիշդից և էլ թէ ժամաւոր-
ներից: Քանանները խմբվել են այդ եկեղեցի-
ներում, մասնաւոր ս. Աստուածածնում, իսկ
ս. Նշան եկեղեցին գրեթէ իր գոյութեան օրից
պահվել է միւս եկեղեցիների օժանդակութիւն-
ներով: Եւ այդ շատ հասկանալի է, քանի որ
ս. Նշանի երկու քանաններն ունեն 208 ծովա,
մեծ մասն աղբար ժողովուրդը. որոնք եկեղե-
ցու առանձնապէս զիրքի պատճառով ոչ քա-
նանայ կարող են պահել և ոչ եկեղեցին:

Այդ աննախնայելի գրութիւնը չարունակ-
վում էր մինչեւ ներկայ յաջորդի օրը: Սա լա-
ւակամ էր զէպի եկեղեցին և կարելից զէպի
քանանները: Սկզբում նա առաջարկեց բարե-
կամարար այս կամ այն քանանային իրանց
ծովներով տեղափոխվել ս. Նշան եկեղեցին,
բայց քանանները չը ցանկացան, պատրուակ
բռնելով իրանց այս կամ այն եկեղեցում ձեռ-
նադրվելը, որը, ի հարկէ, արդէն շատ հնազա-
ծ էր գործնականութեան մէջ՝ նշանակութիւն
չունի (ի միջի այլոց մի և նոյն քանանները
մի քանի օր զրանից առաջ ընդունեցին իրանց
մէջ գիւղերից մէկի վրա ձեռնադրված մէկ
քանանայի):

Այս չարիքից ազատվելու համար յաջորդը
դիմեց վերջին միջոցին, այն է սկսել չէզոքաց-
նել եկեղեցու առաւելութիւնները, հիմնել ընդ-
հանուր քանանական, և ժողովելով բոլոր չորս
եկեղեցու ծիսակատարութիւնները եկամուտը,

զրանց վրա աւելացնել եկեղեցական միւս ար-
դիւնները, ինչ որ կարելի էր յատկացնել քա-
նաններին և համեմատ քանանների տարի-
ների ծառայութեան ունեի տալ մուսքի հա-
մաձայն... Պարզ է թէ այս ծրագիրը որքան
համակրելի է, որքան բարոյական կողմեր ու-
նի թէ ժողովուրդի և էլ քանանների ներկա-
յի և ապագայի վերաբերմամբ:

Բայց այստեղ էլ չաղ պատճառների տէր քա-
նանները զգացին, որ իրանք այլ ևս չը պէտք
է ստանան այն, ինչ որ տիրող անհաւասարու-
թեան ժամանակ ստանում էին: Նրանք երե-
սանց հաւանութիւն տուին, իսկ ծածուկ ժո-
ղովրդին հաւատացրին, թէ յաջորդի կարգադ-
րութիւնը եկեղեցու ուրան հակառակ է, թէ
քանանները չինքնիկ կը դառնան և այլ
զատարկ պատճառներով իրենց: Ալեքսանդ-
ր Գրիգորի մասան մոլորեցնելը շատ հեշտ է և
սրանում երկար տարիներից ի վեր քանանա-
ները խիստ վարժված են: Ժողովուրդը չը կա-
րողացաւ հասկանալ, որ օրէնք դնող իրա-
ւունքի եւ պարտքի սահմանները գիտէ խիստ
որոշել:

Ինչ և է ինչ. յաջորդի այդ փայլուն ծրագի-
րը, ինչպէս յայտնի է «Մշակ»-ի ընթերցողնե-
րին, քանանները (ոչ թէ ժողովուրդը) սեւաց-
րին, չարիքը մնում էր դամոկլեան սուրի նման
կախ ընկած հոգեւոր իշխանութեան զինի վրա:
Վեհափառ Կաթողիկոսը մի քանի անգամ այս-
տեղ եղած ժամանակ գործերին ժողով ծանո-
թանալով, վերապէս անհրաժեշտ փոխակազմա-
կան տեղեկութիւններով ստուգելով քանանա-
ների վիճակը, կոնդակով բարեհաճեց հրամայե-
լու. ս. Նշան եկեղեցու քանաններին տեղափո-
խել միւս եկեղեցիները, պարտաւորեցնել նա-
մապետութիւն կատարելու, իսկ եկեղեցու ծախ-
քերը հոգան ս. Փրկիչ և ս. Աստուածածնի ե-
կեղեցիները:

Յունվարի վերջը մեր յաջորդը իր մօտ հա-
ւաքեց բոլոր քանաններին, կարգաց նրանց
մօտ վեհափառի կոնդակը և քանանները խո-
նարսկելով՝ համաձայնեցին (ի հարկէ երեսանց)
գործ դնել այդ կարգադրութիւնը մեծ պատի
առաջին շարաթից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԲԱՐԵԽՂՃՈՒԹԻՒՆԸ

Սխալը եւ սուտը պէտք է մոռանալ, իսկ
հիմարտութիւնները կրկնել, կրկնել և դար-
ձեալ կրկնել:

Հին հիմարտութիւն է, որ մեր ուսուցիչները
գրութիւնը անապահով է, աւելի անտանելի
և անապահով, քան թէ մեր մշակների և
արհեստավարների գրութիւնը: Մի եղբայրութիւն
առիթ է առաւել մեզ այսօր մտներս բերել և
կրկնել այդ հին հիմարտութիւնը:

Նոր-Նախիջևանում կայ մի ուսուցիչ—Մը-
կրաիչ Տէր-Թաղեանց:

Նրանում ձիգ տարիներ նա ծառայել է իւր-
բեւ ուսուցիչ և վերակացու մեր ազգային
դպրոցներում:

Վերջին տասը տարիները նա ծառայում էր
թեմական դպրոցում, իբրեւ վերակացու:

Պարոնը ունի ընտանիք տասը հոգեւոր բաղ-
կացած և ստանում է ունեի, ինչքան էք
կարծում, միայն... քանանից ռուբլի:

Քանանից ռուբլի պէտք է կերակրել տասը
—տասնմէկ մարդ: Միթէ միայն ուսուցիչ է,
խմելն է: Կան ուրիշ պիտուքներ, անհրաժեշտ
պիտուքներ:

Խնդճ ուսուցիչը չէ կարող կատարել իր
բաղանդաւ ընտանիքը այդ չնչին ունեիով: Նա
պարտքի տակ է մտնում:

Նա դիմում է հոգաբարձութեանը՝ խնդրելով
միանուագ օժանդակութիւն:

Ապա տեսնենք, իմացէք ինչ է անում հո-
գաբարձութիւնը:

Հոգաբարձութիւնը արձակում է նրան վե-
րակացութեան պաշտօնից, որպէս զի—այո, որպէս
զի «տայ հարաւորութիւն. մի այլ օգ-
տաւէտ պաշտօնի ձեռնարկելու»:

Բաղանկարտ ընտանիքը զրկվում է ամէն
միջոցներից:

Պարոնը դիմում է Կաթողիկոսին:

Կաթողիկոսը կոնդակ է նորսում և հոգա-
բարձութիւնը հրաւիրում է նրան նորից:

Ուսուցիչը բաւական է: Ամբողջ հոկտեմբեր
նա չարունակում է իր պաշտօնը:

Հոգաբարձութիւնը գրում են Կաթողիկոսին,
թէ իրանք կը թողնեն իրանց պաշտօնը և
որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճէ յանձ-
նարարել իրանց տեղը ընտրել ուրիշներին:

Ստացվում է նոր կոնդակ:

Կաթողիկոսը օրհնում է հոգաբարձութեանին
և վերակացուի վերաբերմամբ գրում է այս
խօսքերը՝

«Թողնում եմ ձեր բարեխղճութեանը»:

Մեր բարեխղճութեանը...

Բարեխղճ հոգաբարձութեանը էլ արձակում
են վերակացուին և նկատի ունենալով նրա
գրութիւնը՝ պիտի շարունակեն տալ ունեի մի
քանի ամիս եւս:

Իսկ յետոյ՝

Ո՞վ է այժմ մտածում յետոյի մասին...

Ահա իրողութիւնը:

Չեմ դատում հոգաբարձութեանին, չեմ պաշտ-
պանում վերակացուին, եւ միայն իրողութեան
վրա եմ ձեր ուղադրութիւնը խնդրում:

Նրանում տարիներ ծառայել ազգային գոր-
ծի, ունենալ մի մեծ գերբնասան և յուսա-
հատ ընկնել փողոց առանց կօպէկի, կորցրած
առողջութիւն, կորցրած հաւատ, յոյս դէպի
մարդկային որ և էլ բարի գգայունները—
ահա մեր բարեխղճութեան արգասիքը:

«Թողնում եմ ձեր բարեխղճութեանը»...

Ի արեւի զննութեան... այն էլ մեր բա-
րեխղճութեանը...

Ոչ, ի սէր Աստուծու, ազատեցէք, բոլորին
ազատեցէք մեր բարեխղճութեանից, որովհե-
տեւ մենք չը գիտենք և երբեք չենք գիտե-
նայ ինչ է բարեխղճութիւնը:

Մենք միայն գիտում ենք ինչ և վաճառել:

Շուկայում չեն ծախում բարեխղճութեան
սերմերը և եթէ անգամ վաճառէին, մեր ա-
պառաժ սրտերի վրա սերմերը կը մնային չոր,
ցամաք, քարացած և երբեք բոյս չէին տալ:

Ահագին, հարուստ վիճակում կայ միայն մի
թեմական դպրոց և այդ դպրոցի գրութիւնը
այնչպի եղելիկ է, որ թէ չէ կարող ապա-
հովել մի խեղճ ուսուցիչի, կամ վերակացու, որ
ծառայել է երեսուն տարիներ, այլ մուրում է,
որպէս զի իր չէնքը լայնացնէ:

Եւ սակայն մեր թեմին են պատկանում
Մօսկվան և Պետերբուրգը, հարուստ եկեղե-
ցիներով և եկամուտներով:

Մօսկվան և Պետերբուրգը չեն օգնում զըպ-
րոցին:

Միթէ դա ամօթ չէ:

Միթէ դա բարեխղճութիւն է:

Բարեխղճութիւնը...

Ներ չունը ծանրանում, տկարանում է,
այլ ևս պէտք չէ, դուք թողնում էք նրան
ձեր բաղում, տալիս էք մի անկիւն:

Մեր ուսուցիչի գրութիւնը աւելի վատ է և
մեր բաղերում մինչեւ այժմ չը կայ մի ան-
կիւն նրա համար...

Հանենք մեր բաղարաններից այդ աւելորդ,
լիմար բաղը՝ բարեխղճութիւն:

Հանենք, որովհետեւ մենք ամենամարե-
խից արարածներն ենք աշխարհու:

Դերասան Արեւիկան տալիս է ներկայացում:

Թատրոնը դատարկ է: Նոր-Նախիջևանի կա-
պիկները վաղում են Բօստով նայելու Սամոյ-
ովին, որի խաղը Արեւիկան խաղից պակաս է,
աւելի չէ:

Եւ ես ակամայ յիշում եմ մեր մեծ ար-
տիստին:

«Սիրելի բարեխղճ, ասում էր ինձ Աղա-
մեանը, սեղմելով ուժգին ձեռքերս,—ես ան-
բաղդ, անչափ անբաղդ եմ, որ այս արտիստ եմ»:

Գաւառ-Քաթիպան չէր գնալատվում: Բայց
մի օր, ցոյց տալով մեզ «Փորձի» խմբագրու-
թեան նամակը, նա հեգնօրէն ժպտաց. «Եղծ-
բաղդաբար, սեպ նա, ոտանաւորներս աւելի
են գնալատում, շատ արժեն, իսկ քիչ տալ
չեն համարձակում և եւ ոչինչ չեմ ստանում»:

Բոլոր մեր ազգային գործիչները գիտեն, որ
չը կայ մեղանում բարեխղճութիւն:

Եւ ահա ինչու, երբ մի պարոն խնդրում է
Ռաֆայէլ Պատկանեանից ուսուցիչ պաշտօնի
տեղ գտնել, նա համոզում է խնդրատունին
մանկ ակմբանոց իբրեւ ծառայող:

«Հաւատացնում եմ, Լեւոն, դու աւելի
բաղդաւոր կը լինես, քան թէ հայ ուսուցիչը»,
ասում է նա:

Լեւոնը մտաւ իբրեւ ծառայ մեր ակմբանո-
ցը, նա ողջ է, ունի այժմ առուտուր ու ապ-
րում է աւելի լաւ, քան թէ շատերը մեր ու-
սուցիչներից...

Բարեխղճութիւն...

Չեմ առաջը վառարան է, կրակը լիքը մէջը
և դուք ուղում էք այդ վառարանում գտնել
ձիւն և սառնոյց: Որոնեցէք:

Եթէ գտնեք, այն ժամանակ միայն կը խօ-
սեք մեր բարեխղճութեան մասին...

Գր. Չախուչեան

Типографія Грузинск. Т—ва. Большая-Ванская ул., № 27